նողաց կամ չինել տուողաց անունն կամ մականունն, ինչպէս «Մէլէքին և Քափանակին», որք ցարդ կանգուն կեցել են։

Ազգայինք. ինչպէս ամէն տեղ, ասա և ի Կաֆա իւրեանց սեփական աշքաքացութեամբ և հաւատարիմ գործունէութեամբ սիրելի կը լինին քաղաքին տիրող Գենուացւոց. ի Նոցանէ Նախարար, Պարոն և Իշխան պատուանուններով կը մեծարին. կ'ունենան առանձին հայկական զինաւորք, պահակապանք (gendarmerie) որք իրենց զօրագլխով կը կանգնին պարիսպ ընդդէմ այլազգեաց յարձակմանց։

Աբեղայք և անապատաւորք վանքերու մէջ, և անտառներուն խորեր, զատ զատ հողատներու մէջ կը քաշուին հեռացեալք ի զբաղմանց աշխարհի. վանաց մէջ նշանաւոր են Գեմջակ կամ Քամճակ անապատները, յանուն Աստուածամօր եկեղեցւով ի Սուրխաթ, և Մողկան անապատը Ղշլաւ գիւղին մէջ, ուր կը պարապին ուսմամբ, մշակելով իրենց հետ բերած քաղցրիկ աւանդը և դրոշմը հայութեան, այն է մեր նախնեաց ճոխ լեզուն։ Ընդօրինակած են այդ վանքերուն մէջ հարիւրաւոր հոգեխօս գրեանք և շքեղ պատկերազարդել են սուրբ կտակարանք։

Ազգիս մշակ կամ գեղացի մասը, խումբ խումբ ափեալ են Ղրիմու հովասուն լերանց ստորոտը, գեղաձիծաղ անտառաց մօտերը, ուր կը բղխեն քաղցրահամ աղբիւրներ, և այն տեղեր գիւղեր և աւաններ սարքելով, ակօսաբեկ կը պատառեն արգաւանդ դաշտերը։

Կաֆայի հարաւային մասը, դէպ ի սարերը, հայաբնակ նոր քաղաք կը լինի բիւրաւոր հայ բնակչաք և կը կրէ անուն ծովային հայաստան, Սուրխաթ